ՆԱԽԱԳԻԾ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ – Ա

ՎԱՐԴԱՆ ՆՈՐԻԿԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ, ԱՐԹՈՒՐ ՌՈՒԲԵՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՄԵՆ ՌՈՒԲԵՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վարդան Նորիկի Դավթյանին, Արթուր Ռուբենի Հակոբյանին և Արմեն Ռուբենի Հակոբյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող «Մարզ Լոռի, համայնքի Սպիտակ Սպիտակ ք. Ա. Մանուկյան փողոց 21» հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0499-0004 կադաստրային ծածկագրով 0,025494 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասին կից Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Ա.Մանուկյան փողոց, 13/5 հողամաս» հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0499-0068 կադաստրային ծածկագրով 0,001406 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետով սահմանված չափորոշիչներին և որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, հիմք ընդունելով Վարդան Նորիկի Դավթյանի, Արթուր Ռուբենի Հակոբյանի և Արմեն Ռուբենի Հակոբյանին դիմումը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Համաձայնություն տալ «Մարզ Լոռի, համայնքի Սպիտակ Սպիտակ ք. Ա. Մանուկյան փողոց 21» հասցեում գտնվող՝ Վարդան Նորիկի Դավթյանին, Արթուր Ռուբենի Հակոբյանին և Արմեն Ռուբենի Հակոբյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0499-0004 կադաստրային ծածկագրով 0,025494 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասին կից, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Ա.Մանուկյան փողոց, 13/5 հողամաս» հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0499-0068 կադաստրային ծածկագրով 0,001406 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքով օտարելուն:

2. Հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնի չափով՝ 40 598,25 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 2887,5 ՀՀ դրամ):